

ղաց իմոց հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին եւ եղբաւրս Կիրակոսին . Սհակին որ մանուկ հասակաւ առ Քրիստոս փոխեցաւ եւ քեւերցս Եղիսարեթին , Շաղվարդին եւ եղբաւրորդին իմ նորարողբոջ Թարխանին» :

Թէ ինչ հանգամանքով կամ նպատակաւ եկած էր Աւետիս կաթողիկոս Կ . Պոլիս , յայտնի չէ ժամանակակից յիշատակարաններէն : Ժամանակի հանգամանքները երկու են . Թաղրութիւն թոյլ կու տան . կա'մ էջմիածին , Մելքիսեղեկի վերադարձէն ետքը , աւելորդ նկատուած է երկրորդ աթոռակցի մը գոյութիւնը , եւ այս պատճառաւ խորհուրդ տրուած է Աւետիսին՝ երթալ Կ . Պոլիս եւ պատրիարքական աթոռին տէր ըլլալ , եւ կամ , որ աւելի հաւանական կ'երեւայ , հարկ տեսնուած է էջմիածնի պարտքերը վճարելու համար նոր հանգանակութիւն մ'ընել եւ այս նպատակաւ Աւետիս Կ . Պոլիս ուղարկուած : Իրութիւնը ճշգրիտ ըմբռնելու համար յառաջ կը բերեմ հոս Մելքիսեղեկի Կ . Պոլիս ուղեւորութեան եւ վերադարձի պարագաները , օգտուելով միակ պղբեր՝ Չամչեանի տողերէն .

Մելքիսեղեկ կաթողիկոս նեղուած պարտատէրներէն «եւ յԱրարատեան աշխարհէ եւ զնաց ի Կ . Պոլիս . գուցէ մարթասցի ժողովել անտի դրամս : Ընկալաւ զնա սիրով ժողովուրդ քաղաքին եւ մեծամեծք Հայոց , եւ պահեցին զամիսս քանի մի . եւ ջանային հրաժարեցուցանել զնա ի կաթողիկոսութենէ , զիրարձցի երկոյութիւն կաթողիկոսաց . սմին